ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<24>> փետրվարի 2025թ. N ՄՈ/281-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 08-Ի N ՄՈ/645-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի N 79-Ն հրամանը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի հոկտեմբերի 28-ի ՈՄՈ/505-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի փետրվարի 19-ի զեկուցագիրը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի նոյեմբերի 08-ի «Նարինե Ֆարֆարյանին «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու մասին» ՈՄՈ/645-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշման վերնագրում և ամբողջ տեքստում «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց» բառերը փոխարինել «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան միջնակարգ դպրոց» բառերով.
   2) որոշմամբ հաստատված հավելվածի 3.1-ին կետում «264333 (երկու հարյուր վաթսունչորս հազար երեք հարյուր երեսուներեք)» բառերը փոխարինել «318304 (երեք հարյուր տասնութ հազար երեք հարյուր չորս)» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և տարածվում է 2025 թվականի հունվարի 3-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

2025-02-24 17:35:27 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**